ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա / Ժնև / 19 - 23.09.2022 թ.

- **Նպատակը**

ա. փորձագիտական խմբի հանդիպում «UNECE մարդահամարյան շաբաթ-2022 խորագրով.

բ. Բնակչության և կացարանների հաշվառումների վերաբերյալ աշխատաժողով» խորագրով միջոցառում:

Փորձագիտական խմբի հանդիպումը և աշխատաժողովը նպատակներից էր նպաստել Բնակչության և կացարանների հաշվառման վերաբերյալ Եվրոպական վիճակագիրների համաժողովի (CES) հանձնարարականների մշակմանը, և իրականացմանը, որոնք Բնակչության և կացարանների հաշվառման տվյալների հավաքման, արտադրության և տարածման վերաբերյալ գիտելիքների ընդլայնման, նոր գիտելիքի ձեռք բերման, լավագույն փորձի փոխանակման մասնագիտական հարթակ են:

- **Քննարկված թեմաները**

Փորձագիտական խմբի հանդիպման և աշխատաժողովի օրակարգերի շրջանակում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. 2020 թվականի մարդահամարների շրջափուլից քաղված դասերը.

Այս թեմայի շրջանակում UNECE տարածաշրջանի այն երկրները, որոնք ավարտել են 2020թ. շրջափուլի իրենց մարդահամարները, ներկայացրեցին հետմարդահամարյան վերլուծության կարևոր եզրահանգումները, ինչը հաջող ընթացավ, ինչը կարող էր արվել ավելի լավ, ինչն այլ կերպ կարելի է անել ապագայում: Քաղված դասերը հատկապես արժեքավոր են 2020 թվականի շրջափուլից հետո՝ հաշվի առնելով այն աննախադեպ մարտահրավերները, որոնց 2020 և 2021 թթ. բախվել են գրեթե բոլոր երկրները: Խնդրո առարկայի շրջանակում ազգային փորձագետները ներկայացրեցին. ի՞նչ «բացահայտումներ» են արել իրենց երկրների բնակչության մասին, արդյո՞ք ստացված արդյունքներն անսպասելի էին, և, առհասարակ, ներկայացվեց այն ամենն, ինչ օգտակար կլինի միջազգային հանրությանը՝ իրականացնելու ապագա մարդահամարները:

2. Մարդահամարի հետաձգումն արտաքին ճգնաժամների պատճառով. ազդեցություններ և դասեր ապագայի համար.

Covid-19 համավարակի հետևանքով առաջացած ցնցումների հետևանքով այն երկրներում, որոնք մարդահամար իրականացնում են բնակչության համատարած հաշվառման եղանակով, հետաձգվեցին դրա հետ կապված աշխատանքները: Թագավարակից զատ, արտաքին այլ ճգնաժամներ ևս՝ աղետներ ու քաղաքական իրադարձություններ, որոշ երկրներում հանգեցրեցին տվյալների հավաքագրման հետաձգմանը: Այս և դրան առնչվող այլ հարցեր քննարկվեցին հանդիպման ընթացքում: Մասնակիցները ներկայացրեցին տվյալների ժամանակային շարքերում,

երկրի ներսում և երկրների միջև տվյալների համադրելիության վրա մարդահամարի հետաձգման հետևանքները, դատողություններ այն մասին, թե ինչպես կարելի է ապագա մարդահամարները դարձնել ավելի ճկուն՝ խուսափելու ճգնաժամային իրավիճակներում այն հետաձգելու անհրաժեշտությունից, կամ դրա անբարենպաստ ազդեցությունները հասցնելու նվազագույնի:

3. Առաջիկա մարդահամարները UNECE տարածաշրջանի երկրներում.

Փորձագիտական խմբի այս թեմայով հանդիպման շրջանակում հատկապես արժեքավոր էին առաջիկայում մարդահամար անցկացնող երկրների մասնակիցների կողմից նորարարական մոտեցումների ներկայացումները:

4. Անցում մարդահամարի նոր մեթոդաբանությանը. ծրագրեր, փորձառություններ և նորարարություններ.

Այս թեմայի շրջանակում օգտակար էր մարդահամարի մեթոդաբանության արդիականացմանն ու նորարարությանն ուղղված առկա փորձի, ընթացիկ հետազոտությունների կամ ապագա պլանների վերաբերյալ ներկայացումները՝ մարդահամարային ողջ գործընթացի համատեքստում (պլանավորում, անցկացում, տվյալների մշակում, արդյունքների տարածում, ռեսպոնդենտների և օգտատերերի հետ հաղորդակցություն): Ներկայացվեցին վարչական տվյալների օգտագործման ընդլայնման հետ կապված վերջին միտումները՝ վարչական էլեկտրոնային տվյալները թե՛ որպես մարդահամարի տվյալների աղբյուր, թե՛ մարդահամարային գործառնություններին աջակցելու միջոց, ինչի դերն աննախադեպ կարևորվեց Covid-19 համավարակի հետևանքով առաջացած ցնցումների պայմաններում: Կրկին ընդգծվեց, որ տվյալների հավաքման էլեկտրոնային սարքերի օգտագործումը, մեքենայական ուսուցման (machin learning) և արհեստական բանականության (AI) ներուժի օգտագործումը և աշխարհատարածական տեղեկատվության (geospatial information) ինտեգրումը մարդահամարի գործունեության մեջ, մարդահամարների արդյունավետությունը բարելավելու մեծ ներուժ ունեն:

5. Երկարաժամկետ ապագա և հեռանկարներ. Մարդահամարներ-2030-ի փուլ և դրանից անդին.

Այս թեմայի ներքո փորձագետները ներկայացրեցին 2030 թվականին և դրանից հետո իրականացվելիք մարդահամարների հետ կապված իրենց պատկերացումները կամ կոնկրետ պլանները՝ նպաստելով մարդահամարային գրասենյակների /վարչությունների հետագա աշխատանքների հորիզոնների ուրվագծմանը:

6. Բնակչության և կացարանների հաշվառումների վերաբերյալ Եվրոպայի վիճակագիրների համաժողովի հանձնարարականների վերանայումը, ինչպես նաև խնդրո առարկայի վերաբերյալ այլ հարցեր.

Այս նիստում ընտրվեցին ոլորտի Աշխատանքային խմբի նախագահներ, ովքեր հանդես եկան իրենց կողմից համակարգվելիք ոլորտներում վերանայումների վերաբերյալ նախնական առաջարկներով: Քննարկվեցին նաև մարդահամարի հետ կապված զանազան մեթոդաբանական, գործառնական հարցեր և խնդիրներ:

Փորձագիտական խմբի հանդիպումը հնարավորություն ընձեռեց տարածել և փոխանակել մարդահամարային 2020թ. շրջափուլին մասնակցած երկրների կուտակած փորձը, քաղաք դասերը՝ հատկապես ծանոթանալու մեր ժամանակի նոր մարտահրավերներին դիմակայելու և հաղթահարելու այլ

երկրների փորձին, մեթոդաբանության և տեխնիկական-կազմակերպչական բնույթի գործառնություններ իրականացնելիս կիրառված նորարություններին՝ դրանք ծառայեցնելու Հայաստանի 2022թ. Մարդահամարի և կացարանների հաշվառման լայնամասշտաբ և դժվարին գործընթացին:

Արդյունքները

Փորձագիտական խմբի հանդիպումն ու աշխատաժողովն իրապես արժեքավոր էին մարդահամարին առնչվող թեմաների բազմազանությամբ, արդիականությամբ ու կարևորությամբ, նոր մարտահրավերների, երևույթի չափման նորարարական մեթոդների և աղբյուրների, վերջին զարգացումների մասին իրազեկվելու առումով՝ հաշվի առնելով ողջ աշխարհում մարդահամարային տվյալների անգնահատելի կարևորությունը:

Հանդիպումները հնարավորություն ընձեռեցին ծանոթանալ մասնակից երկրների ունեցած վերջին ձեռքբերումներին, դասեր քաղել տվյալների հավաքագրման, մշակման, օգտագործման և տարածման միմյանց փորձից, գիտելիքներ փոխանակել կիրառվող մեթոդների վերաբերյալ:

Փորձագիտական խմբի հանդիպման և աշխատաժողովի հիմնական առաքելություններից էր նաև նպաստել մարդահամարային տվյալների համադրելիության մակարդակի բարձրացմանը:

- **Նշումներ**

Փորձագիտական խմբի հանդիպման հիմնական թիրախային լսարանն ազգային վիճակագրական գրասենյակների մարդահամարի գծով պատասխանատու ղեկավարներն ու փորձագետներն էին, ովքեր զբաղվում են բնակչության և բնակարանային ապահովության, համատարած հաշվառումների պլանավորման, կառավարման և անցկացման հետ կապված հարցերով:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան